որ ամէն ինչ «կուգայ ու կ'անցնի» եւ որ էականը լինելն է եւ ոչ լինելութիւն ձեւացնելը: Ու իր խաչի վրայ նա սպասում է կերպարանափոխման վսեմ վայրկեանին:

— Նայի՛ր, ահա այդ մայրիներով ծածկուած բարձրութեան վրայ Դարաչիչաղն է, երեւանցիների ամառանոցը: Պատերազմից առաջ ունեւոր դասակարգը ամառը թափւում էր այստեղ՝ կառավարչից սկսած մինչեւ վերջին դրագիրը:

— Երեւակայում եմ...

— Մեծ երեւակայութեան պէտք չկայ՝ թղթախաղ, «թազաղուլի», ճերմակ գինի եւ զուռնա:

— Տիկնայք եւ օրիորդներ...ծառերի տակ ծածուկ համբոյրներ...

— Չեմ սիրում ամառանոց ասուած վայրերը. ներքնազգեստի եւ քրտինքի հոտ է գալիս ու մարդիկ գռեհիկանում են, լրբանում...

— Ահա Զանգուն...

— Զանգո՞ւն:

— Այո՛, համբ եւ խուլ, գրեթէ աննշմարելի: Շրջապատող հողմերը ճահճացրել են, տարածուել են ամէն կողմ, չուարած ճամբորդի նման: Գետերը եւս իրենց զարգացման աստիճաններն ունին, ինչպէս երգը: Այստեղ Զանգուն դեռ մելամաղձոտ հառաչ է: սիրտը կոկորդի վրայ յենուող անորոշ կանչ, ձայնի միամիտ նայուածք: Վարը, նա իր թափը կ'առնի լեռներից, կը գտնի իր փոսը եւ կարկաչուն երեւէջներով կը գլորուի անզուսպ քայլերգի նման եւ կը հնչեցնէ իր արծաթէ բորոգանները:

— Լի՛ճը, ահա լիճը...

— Սեւան, Սեւա՛ն:

5.

Թմրած մեր քայլերի տակ լռութիւնը ծանրօրէն երերում է:

Իջնում ենք վար, նստում ափի պսպղուն մանրախիճերի վրայ: Ոչ ոք չի խօսում: Վայրի բաղերի անցնող մի երամ — բաղե՞ր են արդեօք — նիզակի սրածայր երկաթի նման ծակում է միջօրէն, եւ երկինքը բաց է անում իր տանիքը:

Վսեմ եւ խոր այս լայնութեան առջեւ ամէն ինչ փոքրանում է. տարածութիւնը ձեռքերիս վրայ թանձրացած ճառագայթների եղեամ է կապում: Ինձ զգում եմ այնպէս, ինչպէս այդեկութի եղանակին ամպերի մօտ թաւալ եկող գինով մի թռչուն:

Նախ արծաթով ծաղկուած լոյսերի դաշտ է, մի տեսակ կոյր յստակութիւն, պայծառ մի մրափ, ուր էութեան ճերմակ նաւը՝ կոլոր ծակերով հնչուն մի սրինգ՝ դանդաղօրէն սուզւում է մեծ մի ծովածոցումի անդնդում: Ապա, կամաց կամաց, իրական պատկերը մարմին է առնում, եւ երկինքը թափ է տալիս իր սաւանը: Բայց ես՝ գլուխս վար եմ առնում, ինչպէս հեշտասէր այն աստեղագէտը, որ դողալով մօտենում է ջրհորին ամենաթարմ աստղերը քաղելու համար: Ձեռքերիս մէջ եմ առնում ողորկ եւ փայլուն քարիկները եւ ականջ դնում չգիտեմ ո՞րտեղից եկող հեռաւոր ձայներին:

Ես ճանաչում եմ լճերի լեզուն: Լեմանը, Գարդան, Կոմօն եւ Հոռմայ բլուրի վրայ, Ալբանայի լիճը եւ Նեմին, Ասիզիի ճամբին՝ Տրազիմինոն... Գիտեմ այծտերեւի եւ թէյվարդի հարբեցուցիչ բուրումը, լաղուր ջուրերի մէջ ընկղմուող նոճիների եւ մայրիների ստուերները, կածանների շոյող վերելքը, աչքերի ծաղկանուտ տոնը, վերջալոյսների կարմիր սրինգները, գոյների շլացուցիչ խաղերը... Այնտեղ մի օր, հիւսեցի օրերի պսակը, եղայ, ինչպէս սիրած կնոջ առաջի մերկացումի առջեւ՝ սարսուռ եւ տենդ, լոյս եւ դիշեր, չափազանց կեանք, ուստի եւ մի քիչ մահ: Մտերիմ եւ զարդարուն վայրե՛ր, բնութեան գրքի մէջ բոցավառ ձեռքով գրուած էջեր:

Այստեղ, հողերի տակ պառկած խուլ մի թմրուկ պատռել է լերան գլուխը: Հրաբխային մի ուժ վտարել է հորիզոնը, եւ Հայաստանը բաց է արել երկնքի դէմ հսկայ մի աչք:

Ձախ կողմից, կոնակը լիճին տուած, նստել է գերբնական ուղտերի մի կարաւան: Մրրիկների քանդակած այդ ժայռերը նայում են դէպի դուրս՝ ուրիշ մի երկրում բացուող ճանապարհներին, ու ծանր այդ սպասումը մթնոլորտի մէջ հոգեկան անակնկալների շեշտ է դնում: Դիմացի ափը, տակն ու վրայ եղած ողբերգական մի կրկէս է, ուր դժբախտութիւնը եւ տրտմութիւնը քարացած լաւաների դէմ

Հայ մատենագրության թուանշանային գրադարան